



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«22» 09 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000076

Ձեռնարկողը՝

«ԱԴԴՐԵՍՍ» ՍՊԸ
ք. Երևան, Դ. Անհաղթի 17

Գործունեությունը՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Կ. Ուլենցու 45/1
հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի
կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
Երևան քաղաք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000076

<<22>> 09 2020թ.

**Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Կ. Ուլնեցու փ. 45/1 հասցեում
բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ներածական մաս

Ձեռնարկող՝

«ԱԴԴՐԵՍՍ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ
«Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝

Երևան համայնք, Քանաքեռ-Զեյթուն վարչական
շրջան

«ԱԴԴՐԵՍՍ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր՝ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Կ. Ուլնեցու փողոցի 45/1 հասցեում:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 2841մ² ընդհանուր մակերեսով հողամասում՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ բնակելի կառուցապատման:

Գործունեության նպատակն է՝ կառուցել ժամակակից բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր, որը լինելու է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է տվյալ տարածքի շրջակա կառույցներին և շրջակա բնակչության համար չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչընդոտ:

Նկարագրական մաս.

Ըստ ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության տվյալների տեղանքը հարթ է և տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Մինչև 30մ խորության վրա գրունտային ջրերը բացակայում են:

Գործունեության ենթակա տարածքը ասֆալտապատ է, ծառաթփային բուսականությունից զուրկ:

Տարածքում առկա են քանդման ենթակա շինություններ (1165.7մ²):

Քանդման և ապամոնտաժման աշխատանքները կատարվելու են փուլով՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական փուլում կատարվելու են՝

- շինադրի կուտակման համար ժամանակավոր հարթակների ամրացում,
- շինհրապարակի ժամանակավոր ջրամատակարարում, էլեկտրամատակարարում,



- ժամանակավոր կենցաղային և գրասենյակային շարժական շինությունների տեղադրում /ըստ անհրաժեշտության/,
- շենք մտնող բոլոր ենթակառուցվածքների անջատում,
- վերամբարձ կռունկի գործողության գոտիների անվտանգության սահմանների ապահովում,
- շինհրապարակի գիշերային լուսավորվածություն,
- շինմեքենաների լվացման կետի տեղադրում,
- հակահրդեհային անվտանգության սարքերի տեղադրում,
- տեղեկատվական ցուցանակի տեղադրում:

Հիմնական փուլում, ըստ փուլային հաջորդականության, կատարվելու են նշված շինությունների քանդման և ապամոնտաժման աշխատանքները, ապահովելով շենքի բեռնաթափման համաչափությունը:

Քանդման և ապամոնտաժման աշխատանքները իրականացվելու են ըստ հայտում նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Կառուցապատման մակերեսը կազմելու է 1152մ²:

Կառուցվող համալիրում նախատեսվում են երկու ստորգետնյա և տասնհինգ վերգետնյա հարկեր: Ստորգետնյա երկու հարկերը նախատեսվում են որպես ավտոկայանատեղեր՝ տվյալ շենքի բնակիչների համար և վերևի հարկերի հետ կապվում են վերելակներով ու չծխացող աստիճանավանդակներով: Շենքի վերգետնյա՝ 1-2-րդ հարկերում նախատեսվում են հասարակական տարածքներ, 3-14-րդ հարկերում՝ բնակելի, իսկ 15-րդ հարկում՝ կոմերցիոն:

Ըստ նախագծի բնակելի շենքի առավելագույն բարձրությունը տարածքի վերին հատակագծային նիշից 52.50 մետր է: Տանիքը նախատեսված է հարթ՝ տեխնիկական մասի սպասարկման համար:

Բնակելի 3-11-րդ հարկերում նախատեսվում է 1-4 սենյականոց 13 բնակարան, իսկ բնակելի 12-14-րդ հարկերում՝ 1-4 սենյականոց 11 բնակարան: Բնակարանների մակերեսները և ներքին կազմի լուծումները տարբեր են: Բնակարանների սենքերի հիմնական կազմը հետևյալն է՝ նախամուտք, միջանցք /նախասրահ/, խոհանոց, հյուրասենյակ, ննջարան/ներ/, սանհանգույց/ներ/: Յուրաքանչյուր բնակարան ունի բաց պատշգամբ/ներ/, որոնք մեծ դեր են խաղում շենքի ճարտարապետական լուծումներում:

Շենքի արտաքին երեսապատումը նախատեսվում է իրականացնել քարի և ապակու ներդաշնակ համադրությամբ, իսկ արտաքին ջրահեռացումը՝ ներքին կազմակերպված:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացնելու համար կառուցապատողը կդիմի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին՝ համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար: Տաք ջրամատակարարումն իրականացվում է բնակարաններում նախատեսված կաթսաներից:

Նախատեսվող համալիրի գազամատակարարումն ու էլեկտրամատակարարումը իրականացնելու համար կառուցապատողը կդիմի «Գազպրոմ Արմենիա» և «ԷԵՏ» ՓԲԸ-ին՝ համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:

Բնակելի համալիրի ջերմամատակարարումն իրականացվելու է անհատական ջեռուցման կաթսաներով:

Համաձայն ՍՆԻՊ-ի 1.04.03.2008թ. նորմերի շինարարությունը տևելու է 27 ամիս՝ այդ թվում 1 ամիս նախապատրաստական փուլ: Շինարարական աշխատանքներին մասնակցելու են 117 մարդ:

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ էքսկավատոր, աշտարակային վերամբարձ կոունկ, բուլդոզեր-ամբարձիչ, բետոնատար մեքենա, բետոնախտացնող սարք, ավտոինքնաթափ և այլն: Շինարարությունը կատարվելու է կապալային եղանակով՝ համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր՝ բետոն, ամրան, ալյումինե կոմպոզիտային նյութեր, ապակի, տրավերտինե երեսպատում, բարձրորակ ներկ և այլն: Շինարարության համար անհրաժեշտ շաղախը և բետոնը բերվելու են Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով (ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով):

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են թափոններ՝ կենցաղային (1200-1300կգ) և շինարարական (1254տ): Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը՝ պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են շինարարական հրապարակին կից պարզարան (25մ³), որտեղ կատարվելու է մեխանիկական նստեցում: Շինարարության փուլում ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից՝ համապատասխան տեխնիկական պայման ստանալուց հետո, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին: Շինարարության փուլում ընդհանուր ջրօգտագործումը կազմելու է 2611.98 մ³/շին.ժամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում հանվելու է 7000մ³ ընդհանուր ծավալով հողային զանգված, որից 2500մ³-ը ժամանակավոր կուտակվելու և պահվելու է շինհրապարակում՝ հետլիցքի համար օգտագործելու նպատակով, իսկ մնացած 4500մ³-ը՝ կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքներն իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի «Բնակելի համալիր տարածքի բարեկարգման և արդիականացման նախագիծ»:

Կանաչապատման ընդհանուր մակերեսը կազմելու է 1137մ²: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, ինչը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատ տարածքների համար նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, ինչպես նաև նախատեսված են ռետինե խողովակներ՝ ամբողջությամբ ոռոգումը կազմակերպելու համար: Ոռոգման ջուրը կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով: Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Համաձայն հայտի, գործունեության ենթակա տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան:



Նախատեսվող գործունեության կատարման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ժամանակավոր ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են լինելու շինաշխատանքների հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են մթնոլորտային օդի, հողի և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում.

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերի ծածկում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
- շինհրապարակում թափոնների տարանջատում, աղբամանների տեղադրում,
- շինարարական տեխնիկայի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա, հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով,
- մթնոլորտային օդ արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 800 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս

Համաձայն նախնական հայտի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Այն ներդաշնակ է լինելու շրջակա կառույցներին և չի խոչնդոտելու շրջակա բնակչության վիզուալ տեսադաշտը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության փուլով: Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հայտը լրամշակվել է: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ինչպես նաև արտոգնապահության նախարարությունը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Կ. Ուլենցու փողոցի 45/1 հասցեում իրականացվել է համալիրի քննարկում, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:



Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանն ուղղված:
2. Նախատեսվող շինարարական աշխատանքների ժամանակ խստագույնս հետևել աղմուկ առաջացնող սարքավորումների տեխնիկական վիճակին՝ սանիտարական նորմերը պահպանելու նպատակով:
3. Շինհրապարակից դուրս եկող մեքենաների համար սահմանել երթեր և ժամանակացույցի:
4. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
5. Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման նախագծի իրականացումն և պահպանումը:
6. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
7. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
8. Պահպանել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱԴԴԻԵՍՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Կ. Ուլնեցու փողոցի 45/1 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղական՝

Մասնագետ՝



Գ.Գևորգյան

Մ.Ավետիսյան